ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2025 թվականի №-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) Հանձնաժողով է ներկայացվում տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանը 2025 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի հուլիսի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովն անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանի նկատմամբ 2025 թվականի հոկտեմբերի 3-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 3-ի №ՄՄ/34.2-Մ2-7/5494-2025 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման №1 հավելվածի համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային

եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝ 2025 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունները (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի հուլիսի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Մարտունու Սարգսյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2025 թ.